28. ՕՎՉԻ ՓԻՐՈՒՄԸ

Ինըմ ա, չինըմ, մին վրերսկան, անըմը Փիրում։ Կօզի նա լոխ-ճին թարիփլամիշ իլած վրերսկանն ար, ամմա քյասիր ար ապրըմ։

Մին գոնըմ վրերսի քյընալիս օվչի Փիրումը տրեսնըմ ա մին սրեվ օց, մին սիպտակ, ղաշանգյ օցի փրթաթվալ ա։

Օվչի Փիրումըն ասըմ ա. — Ա՛յ վա՜յ, աշխարք, միշտ իտի յրս իլալ, ա՛յ հա՜յ, տանձին լավը առչըն ա օտրմ, տրես է՜՜՜, հունց ա էս սրեվ-թրրեքյ օցը էս սիպտակ, ղաշանգյ օցին փրթաթվալ։ Ա՛յ հա՜յ, էս աշխարքըմրս լավը լավին չի ընգնըմ։

Օվչի Փիրումը եշը՜մ ա, եշը՜մ, քընենքյ անըմ աշխարքիս պեներին յրան, ասըմ. — Դուզ ա, ըստահանք օցեր ըն, ամմա աշ-կըս յոր չօնըմ։

Համ ասըմ ա, համ էլ թվանգյը յրա անըմ, թա սրեվ օցին սպանի, ամմա գյուլլան նի յա կյամ սիպտակ օցին հաքյվին, հաքյին յարա անըմ։

Սրեվ օցը փախչըմ ա, սիպտակ օցը մին թահրավ քյինըմ ա, նի մընընըմ ուրան պունը։

Տու մի՛ ասիլ, էտ սիպտակ օցը օցերին թաքավերին ախճիգյըն ա։

Օցերին թաքավերը ըշըղվըմ ա, կրգնվըմ, կանչըմ ուրան մեծա-մեծներին, ասըմ. — էս հո՞ւ վա կրլիան ծրեռք եր կալալ, իմ ըխճը-կանրս յըրալու ըրալ։

Ընդրանք ասըմ ըն. — Օվչի Փիրումն ա իտի յարալու ըրալ։

Օցերին թաքավերն ասըմ ա. — Ցրես ընդրանա աշըղրս բեղմա

հանիմ, վեր գյիդա՛ հո՞ւ վըմ յըես, վեր գյիդա՛ թվա՛նգյը հո՛ւր յըա յա յըա անըմ, վեր գյիդա՛ եղը մածնան ա։ Թող էրկու կըեռքին տակին ղհա՛րը շատ՝ սըեվ օց քյինին, վեր օվչի Փիրո՛ւմը ղոնաղ քյինի ո՛ւրա՛ն հընգյերին տոնը, շըմշկնին տռանը հանի, քյինի նի մըննի տոն, ընդըա շըմըշկներին մեչը նի մըննին, վեր տոն ետ տըեռնալիս օղի շըմըշկնին կյենա, դըըըններան մին լա՛վ կըծին, սպանին։

Իտի էլ անըմ ըն։ Էրկու սըեվ օցը քյինըմ ըն նի մըննըմ Օվչի Փիրո՛ւմին շըմշկներին մեչը։ Համին էտ վախտը Օվչի Փիրո՛ւմը հընգերին նաղլ ա անըմ, թա հումց ա օղացալ էն սըեվ օցան սիպտա՛կ օցը աղադի, ամմա գյո՛ւլլա՛ն վըեչ թա սըեվ օցին ա նի եկալ, սիպտա՛կ օցին ա յարալու ըրալ։

Հընգյերըն ասըմ ա. — Ցըես էլ ասիմ խե՞ իտի տուխուր ըս։

Օվչի Փիրո՛ւմըն ասըմ ա. — Մըհեկ էլ էս ա իստի տուխուր ըմ ըտըա հետի, իսկի մըթկաս ընգըմ չի։

Էտ վեր էտ էրկու սըեվ օցերը լսըմ ըն, ետ ըն տըեռնըմ, ո՛ւրա՛նց թաքավերին լոխ նաղլ անըմ։

Օցերին թաքավերը վըեր էտ լսըմ ա, հրամմայըմ ա կանչին Օվչի Փիրո՛ւմին ո՛ւրա՛ն կոշտը, վեր ըադարկեք տա, վեր նա օղացալ ա լա՛վըթում անի, վեչ թա փիսըթում։ Ընդըա հետան ա զարկըմ ո՛ւրա՛ն մեծամեծերին։

Էտ օցերին մեծամեծնին վեր քյինըմ ըն, ասըմ, օվչի Փիրո՛ւմն ասըմ ա. — Ցըես հի՞նչ կործ օնիմ օցերին թաքավերին քըշտի՛ն։

Ամմա օցերին թաքավերը մին էլ ա հետան ղըրկըմ, զոռավ տանիլ ա տամ։

Էտ մըեծամեծերին անա մինը օվչի Փիրո՛ւմին ասըմ ա. — Վըեր մըեր թաքավերը քյըեզ փեշքեշ տա, օգյի մին պեն բախշի, տու ասի. «Թաքավերը ապրած կըենա, յըես վեչ մին պեն օզըմ չըմ»։ Վըեր շատ անի, ասի. «Թաքավերըն ապրած կըենա, յըես քու լո՛ւզվիտ տակին մուտանան ըմ օզըմ»։

Օվչի Փիրո՛ւմը իտի էլ անըմ ա։ Թաքավերը հիշքան էլ ստիբում ա, ասըմ ա. «Թաքավերըն ապրած կըենա, յըես վըեչ մին պեն չըմ օզըմ»։ Վեր շատ ստի՛բըմ ա, ասըմ ա. «Ցըես քու լո՛ւզվիտ տակի մուտանան ըմ օզըմ»։

Օցերին թաքավերն ասըմ ա. — Տու մեղավեր չըս, քյըեզ ասողըն ա մեղավեր, ամմա իմ խոսկըս խոսկ ա։ Մըտանին կը տամ, ամմա մին պայմանավ, վեր ընդըա օժին անա վեչ մինին ասիս վեչ։

Օվչի Փիրո՛ւմը խոսկ ա տամ, վեր վեչ մինին ասել չի։ Էտ մը-

տանուն սեկրետն էլ էն ա, վեր հուր ծրեռքի ինըմ ա, լոխ հրյվընների, ղուշերին, աշխարքիս կենթանիներին լուզուն գյուղում ա։

Օվչի Փիրումը ըտրանա ետը էլհա վրերս ա անըմ։

Մին դոնըմ կընգանը նհետ, կընգանը ծի նստըցրած քյինըմ ա մին լենջավ։

Կընգանը տակին ծիյին քոռակը խրխընջըմ ա, ասըմ ա. «Ա՛ մա՛ր, յրես շատ ըմ նըղացալ, էլ կարըմ չըմ կյամ»։ Մարը խրխընջալով ասըմ ա. «Բա վեր տու կարըմ չըս կյա՞ս, յրես կարըմ ը՞մ։ Քյըեզ յրա վեչ մին պեն չի կա, ինձ յրա հինգ հոքի կա։ Մինը Օվչուն կընեգյը, ուրա՛ն խոխան գյվակին, ճոխտըն էլ փորըմը, մին էլ յրես, մինն էլ փորըմըս ա, էլհա էս լենջերավը տանըմ ըմ»։ Էս խոսկերեն յրա Օվչի Փիրումը ծիծաղըմ ա։

Կընեգյը հըրցնըմ ա, թա. — Խե՞ յրս ծրծաղըմ։

— Լհա՛ ինդի։

— Լհա՛ ինդի պեն չինիլ, խե՞ յրս ծրծաղրմ։ Չէ, տու վրս վեր, ասի, խե՞ յրս ծրծաղալ։

Օվչի Փիրումը սուս ա անըմ, ասըմ չի։ Սաղ ճընապարին միչև ուրա՛նց տոն մեթկ ա անըմ, քընենքյ անըմ աշխարքիս պեներին յրան, կընանոցը խասյաթին յրան, տանըմ կընգանը թողըմ ուրա՛նց տանը, ինքը ետ տեռնըմ, քյինըմ գուզոթուն, արթարոթուն, ճշմարդոթուն ճարելի հետի։

Քյինըմ, ա քյինըմ, վերչը մին սարի լենջի թուշ ինըմ, ըտեղ, մընըմ, վեր մին քանի օր դինշանա։

Էտ սարին լենշին չոբանը սուրույավ վեչխարնի ար պահըմ։ Օվչի Փիրումը լոխ հեյվաններին լուզուն գյուղում ար։

Մին դոնըմ չոբանին ալաչուխումը նստած լսըմ ա, վեր էրկու շոն հաչըմ ըն, ուրուր նըհետ կըռև ըն անըմ, հա՛շաթ ըն տամ։ Ինքն էլ եշում ար էն դիմացի պեցուր սարերին, ուրա՛ն մըթկին դոնն ընգած, տըխուր, ասիս լհա՛ մար մընոող արևին նըհետ ինքըն էլ ար օղըմ մար մընի, մըթենն էլ եր ար կոխըմ։

Պրռաված շոնը ասըմ ա. «Վեր իմ տա՛ռրս ինձ լա՛վ չի ուտուցընի՞, յրես էս վեխճաբներին տանելու յըմ կյուլերին փայ անիմ»։

Ջա՛հիլ շոնն էլ ասըմ ա. «Ցրես էլ թողելու չըմ, սուրուն տանելու յըմ մին հենց տրեղ, վրեր կյուլերան հեռու ինի՞»։

Էն մին օրը տրեսնըմ ըն վեր վեխճարին սուրուն կա վեչ։ Չոբաննին տես ըն ման կյամ, տեն ըն ման կյամ, վերչը Օվչի Փիրուման հըրցնըմ ըն տրեղը, ասըմ.— Վեր տեղը քըթնինք, քյըեզ հի՞նչ օղիս տալու յընք։

Օվչի Փիրոումը վեշ մին պեն չի օղրմ։

Քյինրմ ըն սուրոուն քըթնրմ, պերրմ, հալա էրկու կյառնը էլ իվիլացած։

Էտ էրկու կյառներան մինը ասրմ ա. «Ցրես մին քանի սուրու վեխճարների հար ըմ ինելու»։

Էքյրն էլ ասրմ ա. «Ցրես հազար կըլոխ էքյի մար ըմ ինելու»։

Օվչի Փիրոումը էտ վեր լըսրմ ա, էտ չորաննին էլ, վեր ստիբրմ ըն, ասրմ ա. — Դե վեր ինձ օղրմ ըք մին պեն բախշիք, էն իվլացած էրկու սիպտակ կյառնը ինձ բախշեցեքյ։

Վրեր էտ կյառները բախշրմ ըն, տանրմ ա մին օրիշ սարի լենշի էն դաշանգյ ծաղիգյներին, կանանչին մրեչին պեց թողրմ, ինքը կյամ, էլհա ման կյամ սրրրսար ընգած։

Մին քանի տարի վեր անց ա կրենրմ, քյընրմ ա համան էն սարին կըլխան եշրմ, տրեսնրմ ընդեղերք սիպտակ վրեխճարի սուրուն կալալ ա, ոտրանք էն էրկու սիպտակ կյառնան ըն ծընվալ։

Օվչի Փիրոումը ոտրանց պահրմ ա, ինքըն էլ վեխճար ա մորթրմ, օտրմ, բենչար, ծրմակի պըտուղնի, կաթնը, իտի պեներ։

Մին հետ վեր էլհա վրեխճար ար մորթալ, էտ վեխճարին մնացած ջամգաքին յրան էրկու ղրղղուն ըն թըռչրմ, կյամ, եր կյամ։

Ընդրանցանա մինն ասրմ ա. «Էս լենշին մեծ քարը վեր պիցըրցնին, տակին վրեսկե յա ինելու»։

Օվչի Փիրոումը լըսրմ ա, գյուգուում, թա ընդհանք հի՞նչ ըն ասրմ։

Էն քարը պըցրցնրմ ա, տակին տրեսնրմ մին տոռնը կա։ Տոռնը պենրմ ա, նի մրննրմ, տրեսնրմ մին օթախ վրեսկավ լիքը, շուքերը վրեսկավ լըցնրմ ա, թա տուս կյա, տոռնը պենվրմ չի, ջուքերին վրեսկեն վեր եր ա ածրմ, տոռնը պենվրմ ա։

Տա տուս ա կյամ, ասրմ. — Բախտրմրս խտի, ինդի, համ էլ վրեսկու նհետ յրես հի՞նչ օնիմ, վրեսկեն մարթի բախտ չի տամ, շան-սաղոթուն չի տա՞մ, վրեսկեն ղիբիլ ա, ծեռքի եխտ ա, իմը աշխարքիս դուղոթունն ա, էն էլ ճարվրմ չի՞։ Համ ասրմ ա, համ էլ քյինրմ ուրան վեխճարներին կոշտը, տեսնրմ էն ա մրթենը եր ա կոխրմ էն սարին քըշաթոխպըն էլ մին զոլան ա եր կոխրմ, էտ քըշաթոխպին մեչան մին ղրրըթու յա ըրվում։

Էտ ղրրըթուն կյամ ա, մուտանրմ։ Տա Օվչի Փիրոումին տղան ա ինրմ, կյամ ա, թա հորը տոն տանի՞։ Օվչի Փիրոումը թվանգյը թուշ ա օնրմ, թա սպանի, ճընանչում չի ուրան տրղին։

Տղան ծեն ա տամ, հորը անրմը տալավ մուտանրմ, հորը կոլավքն ընգնրմ, պըչպըչորրմ, ասրմ. — Ապա, եք ետ տրեռ, տոն քյինինք։

Օվչի Փիրո̈ւմը ասըմ ա. — Չէ, մինչև աշխարքիս յրան դո̈ւզո̈թո̈ւմ չինի, ճըկըճոկի անիլը պըռծնի վեչ, արթարութում չինի, ճըշմարդութում, հավասարութում չինի, վեր լուխճին մին աշկավ եշին, վեր ազադութում չինի, յըես տոն չըմ կյալ...

Տըղան քուռըփեշման ետ ա տըեռնըմ, քյինըմ։

Ինքը մընըմ ա էն պեցուր սարերին դալում տեմ կա̈լած, հըմբարտ, մըհակը ծեռքին, աշկը էն հեռու սարերին քըցած, արևին ծեքյին եշելի̈ս։